ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը և քաղաքացիական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները

1. Պետական ~~և ծառայողական~~ գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման, վերապատրաստման, կատարողականի գնահատման~~, ծառայողական քննությունների~~ հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների ցանկը հաստատում է համակարգող փոխվարչապետը՝ համապատասխան մարմնի ղեկավարի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավարի հետ:

2. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործուղված դիվանագետների կողմից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու կարգը և դեպքերը սահմանում է Կառավարությունը, իսկ պաշտոնների ցանկը՝ համակարգող փոխվարչապետը:

3. Վարչապետին, Կառավարությանը և նախարարություններին ենթակա պետական մարմինները, որոնք չունեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և գլխավոր քարտուղար, այդ մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացնում է այն համապատասխան մարմինը, որի ենթակայությամբ գործում են: